# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# ՈՐՈՇՈՒՄ

**N 81 - Ա** **26 փետրվարի 2020թ.**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի, «Մանկապատանեկան սպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետի, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 16-րդ հոդվածի պահանջներով ու հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2020 թվականի հունվարի 23-ի N 53-Ա/2 հրամանը

**որոշում եմ՝**

1.Հաստատել.

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի տարածքային և մարզային փուլերի կազմակերպման և անցկացման կազմկոմիտեի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի տարածքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Կազմկոմիտեի նախագահին՝

1) ապահովել նախակրթարանների սաների ակտիվ մասնակցությունը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի տարածքային փուլի մրցումներին.

2) կազմակերպել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի մարզային փուլի մրցումների բացման և փակման հանդիսավոր արարողություն.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի մարզային փուլի մրցումների ավարտից հետո ներկայացնել հաշվետվություն:

3. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար Լուսինե Վարդանյանին՝ «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի տարածքային և մարզային փուլերի մրցումների անցկացման օրերին համապատասխան հաստատություններում ապահովել մասնակիցների առաջին բուժօգնությունը:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի համայնքների ղեկավարներին՝ ապահովել համայնքում գործող նախադպրոցական հաստատությունների մասնակցությունը մրցույթի տարածքային փուլի մրցումներին:

5. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի քարտուղարության պետ Վերգինե Ղուկասյանին՝ միջոցառման անցկացման գործընթացն իրականացնելու համար ապահովել սույն որոշման և միջոցառման կանոնակարգի առաքումը մարզի համայնքներ և հանրակրթական ուսումնական հաստատություններ:

6. Սույն որոշման կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի տեղակալ Նարեկ Գրիգորյանին:

26.02.2020

ՄԱՐԶՊԵՏ՝ Գ. ՍԱՆՈՍՅԱՆ

Գ. ՍԱՆՈՍՅԱՆ
ք.Գավառ

Հավելված N1
<< Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի փետրվարի 26 - ի
N 81 - Հ որոշման

# Կ Ա Զ Մ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ» 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄՐՑՈՒՅԹԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԵՎ ՄԱՐԶԱՅԻՆ ՓՈՒԼԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱԶՄԿՈՄԻՏԵԻ

Զազյան Կարեն - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ /նախագահ/

Հարությունյան Վանիկ - մարզպետարանի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

Վարդանյան Լուսինե - մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետի պաշտոնակատար

Չարվադարյան Գեղամ - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ

Սաֆարյան Համբարձում - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ

Շահբազյան Հասմիկ - մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ

Բոշյան Գրիգոր - Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ /համաձայնությամբ/

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

24.02.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Հավելված N2

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի փետրվարի 26-ի
N 81-Ա որոշման

**Կազմ**
**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի մարզային փուլի անցկացման մրցավարական հանձնաժողովի**

Զարվադարյան Գեղամ - մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի պետ /պատասխանատու/

Սարգսյան Ստյոպա – Գավառ քաղաքի Պ. Ղանդիլյանի անվան N2 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /գլխավոր մրցավար, համաձայնությամբ/

Սիրականյան Հովիկ – մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի մասնագետ /քարտուղար/

Բաղդասարյան Վարազդատ - Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Մովսիսյան Հրայր - Գեղարքունիք գյուղի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Ղուրշուդյան Երվանդ – Գավառ քաղաքի Մ. Բունիաթյանի անվան N8 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Բադեյան Գագիկ - Գավառի Հ. Թումանյանի անվան N3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Էլիզբարյան Արամ - Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ/

Խաչատրյան Փիրուզ - Սևանի Վ. Կարապետյանի անվան N3 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ /մրցավար, համաձայնությամբ

Սիմոնյան Արմեն - Վարդենիս համայնքի N1 մարզադպրոցի տնօրեն /մրցավար, համաձայնությամբ/

24.02.2020

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2020 թվականի փետրվարի 26 -ի
N 83-Հ որոշման

**Ժամանակացույց**
**Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2020 թվականի մրցույթի տարածքային և մարզային փուլերի անցկացման**

| Հ/Հ | Տարածքի անվանումը | Տարածքային փուլի անցկացման վայրը և ժամկետը | Մարզային փուլի անցկացման վայրը և ժամկետը |
|---|---|---|---|
| 1 | Գավառ | 2020 թվականի ապրիլի 20-21-ին, Գավառ քաղաքի Հովհաննես Թումանյանի անվան N3 հիմնական դպրոց, ժամը 12:00-ին | **2020 թվականի մայիսի 26-27-ին**<br>**Գավառ քաղաքի մանկապատանեկան մարզադպրոցում ժամը 12:00-ին** |
| 2 | Ճամբարակ | 2020 թվականի ապրիլի 29-30 -ին, Ճամբարակի ավագ դպրոց, ժամը 12:00-ին | |
| 3 | Սևան | 2019 թվականի ապրիլի 27-28--ին, Սևանի Մեսրոպ Մաշտոցի անվան N1 հիմնական դպրոցում, ժամը 12:00-ին | |
| 4 | Վարդենիս | 2019 թվականի ապրիլի 29-30-ին, Վարդենիսի Էդ.Պողոսյանի անվան N2 հիմնական դպրոց, ժամը 12:00-ին | |
| 5 | Մարտունի | 2019 թվականի ապրիլի 22-23-ին Մարտունու Ս. Դարբինյանի անվան N2 հիմնական դպրոց, ժամը 12:00-ին | |

**Ծանոթություն---** Մրցույթի տարածքային փուլի մրցումները կազմակերպում և անցկացնում են Գավառ, Սևան, Մարտունի, Վարդենիս և Ճամբարակ համայնքների կողմից ստեղծված մրցավարական հանձնաժողովները:

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

24.02.2020

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ